Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 254 - Ա
որոշման

«ԻՆՔՆԱՀՈՍ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի հողատարածքների ջրամատակարարումը ապահովելու նպատակով իրականացվելու է ինքնահոս ոռոգման ջրատարի վերականգնման շինարարական և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Տոլորս բնակավայր, ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	120,327,995 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի հողատարածքների ջրամատակարարումը ապահովելու նպատակով նախատեսվում է ինքնահոս ոռոգման ջրատարի վերականգման աշխատանքների իրականացում՝ մասնավորապես գլխամասային ջրընդունիչի և ջրատարի հատվածների վերակառուցում, ցանցային կառուցվածքների և վերջնային հորի վերականգնում: Իրականացվելու է՝ 2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 119,136,629 դրամի չափով.

		2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Տոլորս բնակավայրի հողատարածքների ինքնահոս ոռոգման ջրատարի վերականգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում: Իրականացվելու է 2026 թվականի ապրիլի 30-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,191,366 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հողատարածքների ինքնահոս ոռոգման ջրատարի վերականգման աշխատանք-ների իրականացում՝ 119,136,629 դրամի չափով. 2) շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,191,366 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ